

պճեղները նրանում էր պլնդ գետնի մէջ, Այն ժամանակ էր, որ լանկարծ մի զլարթ ծիծաղ լսեց նա, և աչքերը վերցնելով մի ոգի նշմարեց, որ նոյն ձորի շահապն էր: «Խուտեմ, ասաց շահապը, ալդ ուլը, որ տեւ է քեզ մալր բնութիւնը, անչափ շատ է մէկի համար: Դա քեզ բնաւ օգտակար չէ, ալլ ճնշում է քեզ: Գորա մի մասը դու ինձ տո՛ւր. ևս կը պահեմ, և երբ որ քեզ պէտք լինի, կը գաս, նորից լեւս կ'առնես»:

Փահլեանը տաւ շահապին իւր զօրութեան աւելորդ մասը, որ նա պահէ: Այժմ գնում էր լեւս ուղելու ալդ պահ տաժ բարիքը, որովհետեւ վախնում էր, իւր ամբողջ զօրութիւնը ձեռք չը բերած, կուր դուրս գալ Զոհրաբի դէմ:

Շահապը նորա ձախը լսեց թէ չէ՝ լառաջ եկաւ և ասաց. «Լաւ կ'անես, որ զօրութեանդ ալդ մասն ինձ մօտ թողնես՝ ալս ժաղի ծերպի մէջ: Այստեղ նա աւելի ապահով կը մնալ, քան ձեռքումդ: Այս ծեր հալօք ինչու ես ուղում բռնաւորել քեզ դրանով»:

«Յետ տո՛ւր, հրամայեց փահլեանը. այսօր ես կարօտ եմ բոլոր ուժիս,

որ ստացել եմ բնութիւնից: Տո՛ւր, ասում եմ, և մի ստիպիր որ սպասեմ»:

«Թող ալդպէս լինի, պատասխանեց շահապը. գու կը ստանաս պահ տաժ ուժդ, բալց իմացիր—դա քեզ բաղդ չի բերի: Ալդ առողջ զօրութիւնը միայն փորձանք կը բերէ քեզ, որովհետեւ չէ լարմարում հասակիդ. և միայն երկտասարդ կտրճին է վալելուչ...»

Որպէս տեսնում է ընթերցողը, պ. Վարդանեանցի գերմանական օրինակը, որի անունը հալ թարգմանիչը զուր կերպով աւելորդ է համարել տալ, շատ և շատ տարբերում է Ֆիրդուսից, առանց որ դրանով ևս կամենալի լանդիմանութիւն անել ում և իցէ. դա մի աղատ փոխադրութիւն է, որպէս ալդ նաև նկատւած է գրքովի սկզբում: Որպէս ալդպիսին, նա լաջողւած է և մի լաւ լաւեւացում է հակական թարգմանական գրադարանին, եթէ միայն, ի հարկէ, ալն Ա. տառը, որ գրքի ճակատին է դրւած, իրօք սկիզբն է նշանակում մի շարք հրատարակութիւնների Արեւելեան վիսալսարհից և ոչ միայն ձեւի համար է դրւած:

Ա. Ա.

ԱԳԱՊԵԱՆ ԱՐԵԱԿ.—«ՄՈՒՍԻՆԻ ԳԱՆԳԱՏԸ». պատկեր գիւղական կեանքից. (արտատպած «Նոր-Ռար» լրագրից). 32 երես, փոքր ութածալ, № 10 տառ. Թիֆ., 1890 թ., տպ. Յ. Մարտիր.: Գինն է 7 կոպ.:

Մի շատ սրտաշարժ գրամա է ալս պատահում է մեր հալ գիւղերում, փոքրիկ պատմութիւնը, մի դրամա, որ գուցէ ամեն տեղ, ամեն անգամ պատահում է մեր հալ գիւղերում, թէն մենք նորա մասին ոչ մի տեղեկութիւն չ'ունինք: Հեղինակը իւր

աշակերտութեան ժամանակ, ամառը, երբ նա վերադարձել է իրանց գիւղը, Ղազարի կողմերում՝ մի օր պատահմամբ տեսել է այդ գիւղական կեանքի իրական, կենդանի, ոչ թէ մտացածին դրաման և խոր դժգոհած՝ գրել է այդ սարսափելի անցքը: Պատմութիւնը այս է:—Մի խեղճ, աղքատ և աշխատասէր գիւղացի՝ Մուսին անունով, մի օր իւր միակ ալգին պահպանելիս, նկատել է, որ իրանց համագիւղացի հարուստ Բադերանց Եփրեմը՝ թշնամաբար մտել է նորա ալգին և քաղում, փչացնում է խաղողի վաղերը: Այդ Եփրեմը ուրիշ անգամ էլ չատ է արած ալգպիսի չարագործութիւններ Մուսինին մատուցելու նպատակով, բայց Մուսինը այդ չի նկատել: Այս անգամ վերջապէս խեղճ Մուսինի համբերութիւնը հատում է և նա, կամենալով պատժել չարագործին, իւր ձեռի եղանով խփում է Եփրեմի գլխին և ալգպէս արնոտ երեսով բերում է նորան գիւղ: Գիւղացիք միաբերան դատապարտում են ոչ թէ չարագործ Եփրեմին, այլ խեղճ Մուսինին, որ համարձակ էլ է փաշտով խփել հարուստի տղայ գող Եփրեմին: Հեղինակը, որ տեսել է այդ, խորհուրդ է տւել Մուսինին դանդաղելու, բայց կաշառակեր «քեօխլան» նոյնպէս պաշտպանում է գողին և սաստիկ անխիղճ վճիռ է տալիս Մուսինի համար: Այդ վճիռ համաձայն, Մուսինի մի հատիկ «աչառը» խլում են նրանից և հրապարակաւ նրան թակում են բարբարոս, անխիղճ եղանակով... Այդ հրապարակական պատժի նկարագրութիւնը կարդալիս, մարդ փշաքաղում է ամ-

բողջ մարմնով... Եւ, որ ամենից վրդովեցուցիչն է, համագիւղացիք սառնութեամբ նայում են թշուառ Մուսինի տանջանքների վերայ և զեռ կարողանում են ծիծաղել՝ թէ ինչպէս իւրաքանչիւր հարածից՝ ոտքերով ցատկում, թռչկոտում էր Մուսինը... Այդ բարբարոսութիւնը նոյնպէս տեսել է հեղինակը և աղնիւ դալուլթից գրդւած՝ ուղեցել է սպանել քեօխլան, բայց չեն թողել: Հեղինակը մի խիստ բողբ է դրում և տալիս է Մուսինին, որ ներկայացնէ քաղաքի դատաւորին: Բայց ոչ մի հետեւանքի չի հասնում: Խեղճ Մուսինը աշառից զրկւելով՝ բոլորովին քանդւում է, թողնում է գիւղը, թողնում է իւր ջահէլ կնոջը, որդոցը և գալիս է Թիֆլիս փող աշխատելու... Սակայն ալստեղ էլ բողբը նրան հալածում է. մի անբարոյական կին, որի մօտ Մուսին ծառայութեան է մտնում, թշնամացած նորա հետ, թունաւորում և սպանում է նորան: Ահա թէ իրտեղ հասցրեց Մուսինին իւր գանգատը—վերջացնելով աւելացնում է իւր կողմից լարգոյ հեղինակը:

Այս փոքրիկ պատմութեան մէջ՝ ամենից առաջ աչքի է ընկնում ալն երևութը, որ գիւղացիք, այդ «անմեղ և անարատ գիւղացիք», նոյնպէս վարակւում են փողի, հարստութեան, «կուպօնի»—ինչպէս ասում է Գ. Ուսպէնսկի—աղդեցութեամբ և մոռանում են իրանց խիղճը, իրանց մարդկավրն ազնիւ զգացմունքները: Խեղճ Մուսին, որովհետև աղքատ էր, անտէր, անօգնական էր, ուրեմն և նա «մեղաւոր էր», նա իրաւունք չուներ բողբելու հարուստի դէմ, նա

չը պէտք է նկատէր հարուստի մեղքերը և չարագործութիւնները. հակառակ դէպքում, ալդ է նորա վախճանը, ինչ որ պատահեց. — Ահա դիւղական կեանքի նոր լողիկան, որ առաջացել է փողի, կուպօնի շնորհիւ և որը ամենեւին չի զանազանում մեր, քաղաքի լողիկալից... Այդպէս խօս մտածում են և մերոնք, մեր քաղաքի կուլտուրական հարուստները, ալդպէս մտածում են նոքա, որոնց մօտ ոչինչ է դիւղացին, իւր բոլոր կենսական ֆիլոսօֆալութիւններով հանդերձ. Գիւղացու մասին մենք բոլորովին ուրիշ կարծիք ունէինք առաջ:

Երկրագործական ազնիւ ու անխարդախ պարապմունքը իւր աղերսութեան կնիքը դրել է դիւղացու վերայ և ալդպիսով՝ շատ վաղ ժամանակներից նա լալտնի է իւր անմեղ, պարզ, առաքինի բնաւորութիւնով: Իսկ ալժմ, մեր շահադիտական դարում, երբ փողի հաշիւը դառել է մարդոց կեանքի բարձրագոյն կուլտը, երբ հաշ վաճառականը՝ իւր ճարպիկութեան և փողասիրութեան ընդունակութիւններով՝ խօսելու առարկայ է դառել, շատ հաւանական է, որ դիւղացին էլ վարակւի ալդ փստից, ալդ անբարոյական ընդհանուր հիւանդութիւնից:

Սակայն պէտք է ասել՝ որ պ.

Ագապեանի նկարագրած գիւղացիք մի որոշ տեղի—Ղաղախի գիւղացիք են, որոնք գուցէ՝ առանձին հանդամանքներով՝ աւելի մօտ են առևտրական մարդոց հետ, քան թէ այն գիւղացիք, որոնք մշտապէս նրկրագործութիւնով են պարապում և շատ առանձնացած են իրանց հեռաւոր տեղերում... Այս վերջին դէպքում, գիւղացիք անշուշտ աւելի մաքուր կը լինին և հարստութեան, փողի տեսակէտը աչքքան մեծ ոյժ չի ունենալ նրանց աչքում:

Պ. Ագապեանի դրած պատմութիւնը, առհասարակ, այն առաւելութիւնը ունի, որ ինքը հեղինակը պատմութեան մէջ մասնակցում է և սաստիկ ջերմ պաշտպան է հանդիսանում խեղճերի, թշառներին... Այս լատկութիւնը շատ գնահատելի է այն պատճառով, որ ընթերցողը աւելի պարզ, աւելի կենդանի է երևակայում ամեն բան և ընթերցումից ստացած տպաւորութիւնն էլ՝ շատ խոր և ուժեղ է լինում. Ափսոս, որ հեղինակի լեզուն մշակւած, կանոնաւոր չէ, ալ մի խառնուրդ է համարեա գիւղական բարբառի և դրականական ոճի: Շատ ցանկալի է, որ պ. Ագապեանը լուրջ ուշադրութիւն դարձնէր ալդ հանգամանքի վերայ:

Ն. Ղ.